Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-2 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-30.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 50 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 8 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 24 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 30) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը:
  Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը եվ ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 8 խմբակ՝
  - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
  - Կինեզոլոգիա,
  - Ձեռքի աշխատանք,
  - Երգ,
  - Խոհարարական,
  - Առողջապահական,
  - Գրական,

- Քննարկումների ակումբ

Խմբակներին մասնակցել է 50 շահառու:

Կազմակերպվել է թվով 32 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 50 շահառու: Իրականացված միջոցառումներն են.

- Հանդիպումներ քահանայի հետ
- Տարեցների միջազգային օր
- Հանդիպում ներքին հիվանդությունների ասոցիացիայի աշխատակիցների հետ,
- Էքսկուրսիա՝ Բնության թանգարան, համերգ «art Lunch»-ում,
- Գոհար եվ «Գոհարներ» երգչախմբի համերգ Նարեկացի արվեստի միությունում,
- Էքսկուրսիա՝ Մուսալեռ, Էջմիածին, Սբ.Հռիփսիմե, Մաչանենց տուն, Սբ.Գայանե,
- Էքսկուրսիա՝ Մայր տաճար, Սբ.Հռիփսիմե, Սբ.Գայանե,
- Էքսկուրսիա՝ Ծաղկեվանք,
- Էքսկուրսիա՝ Երերույքի վանք, Գյումրի, Սև բերդ, Յոթ Վերք, Ամենափրկիչ եկեղեցի,
- Էքսկուրսիա՝ Բյուրական, Ամբերդ, Սբ. Աստվածածին եկեղեցի, Տեղերի վանք, Աղձք՝ Արշակունիների դամբարան,
- Էքսկուրսիա՝ Սբ.Աստվածընկալ եկեղեցի, Դիլիջան, Գոշավանք, Հաղարծին, Պարզ լիճ,
- Այց Պատմության թանգարան,
- Ծննդյան օրվա նշում և հայկական ավանդական ճաշատեսակի՝ պասուց տոլմայի պատրաստում,
- Ամանոր ,
- Ա. Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Արմենիա» միջազգային փառատոն,
- Ա. Բանաջանյան համերգասրահ, «Ակունք» ազգագրական համույթի համերգը,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ, «Երեվանյան 16-րդ միջազգային երաժշտական փառատոն»,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ,
- «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոնի փակման համերգ,
- Հայաստանի կույրերի միավորման Արաբկիրի մշակույթի կենտրոն, «Իմ սրտի Երեվանը» համերգ,
- Ա. Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի Երևանյան 16-րդ միջազգային փառատոնի փակման համերգը՝ Դվորժակի «Ռեքվիեմը»,
- Կամերային երաժշտության տուն, հնագույն երաժշտության «Տաղարան» համույթ-բարրոկո եվ հայկական երաժշտության համերգ,
- Երեվանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Վահանգ Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի համերգ,
- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եվ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ա. Խաչատրյան «Սպարտակ» բալետ,
- Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Կոմիտասի լարային քառյակի 100-ամյակին նվիրված համերգ:
- Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն, ՀՀ կրթության, գիտության եվ մշակույթի նախարարության գեղարվեստական դաստիարակության եվ մշակույթի մանկապատանեկան «Մարիոնետների թատրոն»-ի հաշվետու համերգ:
- Ա. Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա. Խաչատրյանի անվան միջազգային 12-րդ փառատոնի շրջանակներում՝ համերգ նվիրված երեխաների իրավունքների կոնվենցիային:
- Ա. Խաչատրյան համերգասրահ, Գալա համերգ նվիրված Շ.Ազնավուրի 100-ամյակին: Հայաստանի Ալթունյան պետական անսամբլի, Շ.Ազնավուրի անվան Երեվանի մշակույթի եվ արվեստի քոլեջի հետ համատեղ:

- ➢ Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան միջազգային 12-րդ փառատոնի շրջանակներում՝ համերգ:
- ➢ Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կամերային կազմ, Անտոնիո Վիվալդի «Տարվա եղանակները», մենակատար՝ Անուշ Նիկողոսյան:
- ➢ Նարեկացի արվեստի միություն, համերգ նվիրված հնաբնակ երեվանցիների ասոցիացիայի հիմնադիր Կարլեն Բաբայանի հիշատակին:
- ➢ Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբ, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ Կ. Ջենքինս սիմֆոնիկ ադիմեուս:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ➢ Նվիրված տարեցների միջազգային օրվան, Կոմիտասի այգում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/v/1As6Vp6hxf/),
- ➢ էքսկուրսիա՝ Բնության թանգարան, համերգ «art Lunch»-ում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/p/1HBTwFrWCV/ ),
- ➢ Գոհար եվ «Գոհարներ» երգչախմբի ելույթը Նարեկացի արվեստի միությունում (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmsy4_S-R0/ ),
- ➢ էքսկուրսիա՝ Մուսալեռ, Էջմիածին, Սբ.Հռիփսիմե, Մաչանենց տուն, Սբ.Գայանե (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/reel/906784204298984),
- ➢ էքսկուրսիա՝ Գյումրի (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmpuwOLDcN/ ),
- ➢ էքսկուրսիա՝ Բյուրական, Ամբերդ, Սբ.Աստվածածին եկեղեցի, Տեղերի վանք, Աղձք՝ Արշակունիների դամբարան (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmpsxyjTxf/ ),
- ➢ Պատմության թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmsTmPwxMT/)
- ➢ Հանդիպում քահանայի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmt8R0C27i/ ),
- ➢ Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmt5qXu16R/ ),
- ➢ Խոհարարական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/1355759465837467 ),
- ➢ Հոգեբանի խմբային աշխատանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://fb.watch/wmtawna779/ ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 46 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 49 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 49 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 39 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 39 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 16 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 25 |
| 5.3 | Ձեռքի աշխատանք | 7 |
| 5.4 | Երգ | 17 |
| 5.5 | Խոհարարական | 12 |
| 5.6 | Առողջապահական | 18 |
| 5.7 | Գրական | 13 |
| 5.8 | Քննարկումների ակումբ | 6 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 27 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Բաղնիքի ծառայություն | 1 |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան___ «16»12.2024թ
(ստորագրություն, անուն,ազգանուն)